

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/07-3**

ք. Երևան

«02» փետրվար. 2021թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խ. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 20.01.2021թ.-ի Հ-12-Լ հրամանի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլ Թի Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին՝ համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ



3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ոչ ավել, քան 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

Պայմանագրի N 1 հավելվածի գնացուցակում նշված են ՄԳ/ՆԳxԾ բանաձևով հաշվարկված գները:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Մարգարյան 29/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570065411040100
ՀՎՀՀ 01301624



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Չափաբաժնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
3	50111130/503	Տոյոտա Կորոլա 1.4 (2008-2011թ.) TOYOTA COROLLA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	500000	1	Ք.Երևան, Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:
9	50111130/509	Տոյոտա Կորոլա 1.6 (2012-2013թ.) TOYOTA COROLLA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	500000	1		

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ և նույնացման համարները՝ ըստ չափաբաժինների	
		3-րդ չափաբաժին	9-րդ չափաբաժին
		Տոյոտա Կորոլա 1.4 (2008-2011թ.) TOYOTA COROLLA	Տոյոտա Կորոլա 1.6 (2012-2013թ.) TOYOTA COROLLA
		JTNBH58EX0J008577 JTNBM58E903504521	NMTBB4JE20R030942 JTNBV58E80J201870
1	2	3	4
		Մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գներ -գնացուցակ /ՀՀ դրամ/	
1	Բռնկման համակարգի ստուգում	1167.729	1104.757
2	Կցորդման համակարգի ստուգում	1167.729	1104.757
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1167.729	1104.757
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1167.729	1104.757
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	1167.729	1104.757
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1167.729	1104.757
	1.Շարժիչ		
7	Շարժիչի հանում և տեղադրում	38924.29	36825.22
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	144019.9	136253.3
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	31139.43	29460.18
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	23354.57	22095.13
11	Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով	7006.372	6628.54
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	2335.457	2209.513
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	2335.457	2209.513
14	Փականների խցուկնի փոխարինում	2335.457	2209.513
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	2335.457	2209.513
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	70063.72	66285.4
17	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	35031.86	33142.7
19	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	7784.858	7365.045
20	Ծնկաձև լիսեռի ուղղում	7784.858	7365.045
21	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	11677.29	11047.57
22	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	11677.29	11047.57
23	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	19462.14	18412.61
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	7784.858	7365.045
25	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	11677.29	11047.57
26	Փոկանիվի փոխարինում	7784.858	7365.045
28	Շարժիչի շղթայի փոխարինում	70063.72	66285.4
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	15569.72	14730.09
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	11677.29	11047.57
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	4670.915	4419.027
32	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	778.4858	736.5045

33	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	9341.829	8838.054
34	Յուղի ծորակի փոխարինում	1556.972	1473.009
35	Օդաքաշակ փողրակի փոխարինում	3113.943	2946.018
37	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	3892.429	3682.522
38	Շարժիչի կափույրի փոխարինում	19462.14	16939.6
39	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	19462.14	16939.6
40	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	10898.8	10311.06
42	Ատամնանիվի փոխարինում	778.4858	736.5045
43	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	778.4858	736.5045
44	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	17126.69	16203.1
45	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	11677.29	11047.57
46	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	10898.8	8838.054
47	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	12455.77	11784.07
48	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	12455.77	10311.06
49	Գլխիկի հեղույսի փոխարինում	2724.7	2577.766
50	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1167.729	1104.757
51	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	19462.14	18412.61
52	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	15569.72	15466.59
53	Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը	3113.943	2946.018
54	Կափույրի բնիկի նորոգում /գնեզդո/	1556.972	1473.009
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
55	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1167.729	1104.757
57	Համակարգչային ախտորոշում	3892.429	3682.522
58	Յուղի ռադիատորի փոխարինում	7784.858	7365.045
59	Յուղի ռադիատորի նորոգում	778.4858	736.5045
60	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	7784.858	7365.045
61	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	7784.858	7365.045
62	Վառոցքի մոմի փոխարինում 1 հատ	389.2429	368.2522
63	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	7784.858	7365.045
64	Օդի զտիչի փոխարինում	778.4858	736.5045
65	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1556.972	1473.009
66	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	778.4858	736.5045
67	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	7006.372	7365.045
68	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	10898.8	10311.06
69	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	17126.69	16203.1
70	Բոցամուղի կողավորում	778.4858	736.5045
71	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	778.4858	736.5045
72	Բենզամղիչի փոխարինում	9341.829	8838.054
74	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1556.972	1473.009
76	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	6227.886	5892.036
77	Ղեկավարման բլոկի վերանորոգում	15569.72	14730.09
78	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15569.72	14730.09
79	Վառելիքի բաքի մաքրում	2335.457	2209.513
80	Օդի ծախսի տվիչի փոխարինում	13234.26	12520.58
81	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	11677.29	11047.57

82	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	7784.858	7365.045
83	Բենզոբաքի բենզոմոնիտի ցանցի փոխարինում	3892.429	3682.522
84	Բենզոբաքի բենզոմոնիտի ցանցի մաքրում	3892.429	3682.522
85	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	9341.829	8838.054
86	Տվիչի փոխարինում	7784.858	7365.045
87	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	3892.429	3682.522
88	Օդազտիչի իրանի փոխարինում	1556.972	1473.009
89	Էլ.բենզոմոնիտի կախոցի փոխարինում	778.4858	736.5045
3. Սառեցման և արտածման համակարգ			
90	Հովհարի փոխարինում	17126.69	16203.1
91	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9341.829	8838.054
92	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	15569.72	14730.09
93	Ռադիատորի նորոգում	31139.43	29460.18
96	Ընդարձակող բաքի փոխարինում	1556.972	1473.009
97	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1556.972	1473.009
98	Ջրի ծորակի փոխարինում	3113.943	2946.018
99	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1556.972	1473.009
100	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3892.429	3682.522
101	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	54494	51555.31
102	Վառարանի ռադիատորի նորոգում	778.4858	736.5045
103	Վառարանի շարժիչի փոխարինում	11677.29	11047.57
104	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	4670.915	4419.027
105	Ջեռուցիչի իրանի փոխարինում	3892.429	3682.522
106	Թերմոստատի փոխարինում	9341.829	8838.054
107	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	12455.77	12520.58
108	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	12455.77	11784.07
109	Գեներատորի փոկի փոխարինում	3113.943	2946.018
110	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	4670.915	4419.027
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	31139.43	29460.18
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	10898.8	10311.06
114	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	7784.858	7365.045
115	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1167.729	1104.757
116	Խլարարի ներդիրի փոխարինում	3113.943	2946.018
117	Խլարարի կախոցի փոխարինում	3892.429	3682.522
118	Հովացման հեղուկի փոխարինում	4670.915	4419.027
119	Դիֆուզորի փոխարինում	4670.915	4419.027
120	Կոնդիցիոների լիցքավորում	7784.858	7365.045
122	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	12455.77	11784.07
123	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4670.915	4419.027
124	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	4670.915	4419.027
125	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	15569.72	14730.09
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում	6227.886	5892.036
4. Փոխանցման տուփ			
127	Փոխանցման տուփի յուղի զտիչի փոխարինում	10898.8	10311.06
128	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	14012.74	13257.08
6. Առջևի և հետևի կամրջակներ			
158	Առջևի կիսաստնիները միացնող հանգույցի փոխարինում	15569.72	14730.09

7. Կախոց			
159	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	10120.31	9574.558
160	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	11677.29	11047.57
161	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	14012.74	13257.08
162	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	14012.74	13257.08
163	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	14012.74	13257.08
164	Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում (մեկ անիվի համար)	5838.643	5523.784
165	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	3503.186	3314.27
166	Ձախ կամ աջ հողակապի նորոգում	11677.29	11047.57
167	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	9341.829	8838.054
168	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	11677.29	11047.57
169	Առջևի զսպանակի փոխարինում	10898.8	10311.06
170	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10898.8	10311.06
171	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	3892.429	3682.522
172	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	6227.886	5892.036
173	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	6227.886	5892.036
174	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	11677.29	11047.57
175	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5060.157	4787.279
176	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	3503.186	3314.27
177	Հարվածիչի (բարձիկի) փոխարինում	11677.29	11047.57
178	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	6227.886	5892.036
179	Գնդե հողակապերի փոխարինում	6227.886	5892.036
180	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7784.858	7365.045
181	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4670.915	4419.027
182	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	6227.886	5892.036
183	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	778.4858	736.5045
184	Կայունարարի կալունակի փոխարինում	4670.915	4419.027
185	Հետևի զսպանակների փոխարինում	10898.8	10311.06
186	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	7784.858	7365.045
187	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3113.943	2946.018
188	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	11677.29	11047.57
189	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	3503.186	3314.27
190	Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում	6617.129	6260.288
191	Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում	6617.129	6260.288
8. Ղեկային մեխանիզմ			
192	Ղեկայունակի հիմնական նորոգում,	58386.43	55237.84
193	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	7784.858	7365.045
194	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	3892.429	3682.522
195	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	9341.829	8838.054
196	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	6227.886	5892.036
197	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	15569.72	14730.09

198	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5838.643	5523.784
199	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	10898.8	10311.06
200	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	10898.8	10311.06
201	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	6227.886	5892.036
202	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	3892.429	3682.522
203	Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	7784.858	7365.045
204	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	2335.457	2209.513
205	Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում	3503.186	3314.27
206	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	6617.129	6260.288
207	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	5060.157	4787.279
208	Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	3113.943	2946.018
9. Արգելակային համակարգ			
209	Վակումային ուժեղարարի փոխարինում	24911.54	23568.14
210	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	4670.915	4419.027
211	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10898.8	10311.06
212	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	10120.31	9574.558
213	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	9341.829	8838.054
214	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	6227.886	5892.036
215	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9341.829	8838.054
216	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9341.829	8838.054
217	Առջևի սուպպորտի վերանորոգում	9341.829	8838.054
218	Հետևի սուպպորտի վերանորոգում	9341.829	8838.054
219	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	10120.31	9574.558
220	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	10120.31	9574.558
221	Արգելակային փողրակի փոխարինում	7784.858	7365.045
222	Արգելակային կոճղակների փոխարինում	4670.915	4419.027
223	Արգելակային համակարգի օդահանում	4670.915	4419.027
224	Թմբուկային կոճղակների փոխարինում	4670.915	4419.027
